# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.01.2020թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ՆԳ-2019/207**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Սոցիալական ապահովության ծառայության ներկայացուցիչներ՝

Ա. Միքայելյանի (լիազորագիր, տրված՝ 23.01.2020թ.)

Հ. Աջամօղլյանի (լիազորագիր, տրված՝ 23.01.2020թ.)

«Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Ավագյանի (իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, գրանցման համար՝ 56.110.33267)

«Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Մկրտչյանի (լիազորագիր, տրված՝ 13.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ /26-1/21369-2019 գրությամբ «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Սոցիալական ապահովության ծառայության 23.12.2019թ. թիվ 02/12-1/29871-2019 գրության հիման վրա, 24.12.2019թ. թիվ /26-1/21369-2019 գրությամբ նախաձեռնել է «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

**2. <u>«Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ն 30.12.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Սոցիալական ապահովության ծառայության (հետայսու՝ Ծառայություն) կողմից վերոնշված N «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» գնման պայմանագրի կետերի խախտումը չի ընդունվում Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս ՍՊԸ-ի (հետայսու՝ Ընկերություն) կողմից:

Փաստական տվյալներով պայմանագիր է ստորագրվել Ծառայության և Ընկերության միջև 18.06.2019 թվականին, իսկ իրական հասանելություն սպասարկվող համակարգերին տրամադրվել է 29.07.2019 թվականին, միայն այս փաստը վկայում է այն մասին, որ խախտվել է աշխատանքի բնականոն ընթացքը:

Ծառայության կողմից տրամադրված առաջին իսկ իրականացվող աշխատանքների ցանկի մեջ, որոնք իմիջայլոց տրամադրվել են դեռ մեկ ամիս առաջ այն պահից, երբ Ընկերությանը վերջապես տրամադրվել է հասանելութուն սպասարկվող համակարգերին, եղել են այնպիսի կետեր, որոնց լուծումը Ընկերության կողմից անհնարին էր (կից ներկայացնում ենք փաստերը):

Սա վկայում է այն մասին, որ Ծառայության համապատասխան պատասխանատու մարդիկ ի սկզբանե հասկացել են թե ինչ խնդիրներ են դրանք: Ընկերությունը բազմիցս բարձրացրել է այս հարցերը, բազմիցս գրավոր տեղեկացրել ենք այս խնդիրների մասին, սակայն այս փաստերը անտեսվել են վերջիններիս կողմից:

Ընկերությունն այս աշխատանքին մոտեցել է ամենայն պատասխանատվությամբ, դա է վկայում այն փաստը, որ Ծառայության կողմից չտրամադրվելով համակարգին վերաբերվող և ոչ մի տեխնիկական փաստաթղթեր, Ընկերությունն իրականացրել է մեծ ծավալային աշխատանքներ, այդ թվում նաև արմատական խնդիրների լուծման մասով:

Ընկերությունը բազմիցս հանդես է եկել Ծառայության կողմից նշված կետերի չկատարված լինելու մասին բարձրաձայնումով, սակայն վերջինս չի արձագանքել՝ տալով վերջնաժամկետ 02.12.2019 թվականը, առանց հաշվի առնելու պահի իսկությունը և իրենց կողմից նշված խնդիրների բարդություններն ու ժամանակատարությունը:

Ընկերությունը այս ամենից հետևություն է կատարում այն մասին որ Ծառայությունը և համապատասխան պատասխանատու մարդիկ ի սկզբանե չեն ցանկացել աշխատել Ընկերության հետ:

«Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ-ն խնդրում և պահանջում է իրականացնել խորը մասնագիտական ուսումնասիրություններ, թե ինչու են այդ խնդիրները ի հայտ եկել:

Ընկերությունը իր մասնագիտական հմտություններով գտնում է, որ այդ համակարգերը չեն համապատասխանում պահանջներին՝ դրանցով պատշաճ գործընթացներ իրականացնելու համար: Եվ տարիներ շարունակ համակարգը սպասարկվել է մեկ ընկերության կողմից, որը ունեցել է մենաշնորհ դիրքեր: Սա է վկայում այն մասին որ համակարգը չի ենթարկվել սերնդափոխության և արդիականացման, որից էլ բխում են այսպիսի հետևանքներ և խնդիրների անլուծելի դեպքեր:

Ընկերությունը նաև հարց է բարձրացնում, թե ինչու էր Ծառայությունը ամիսներ շարունակ օգտվում Ընկերության կողմից մատուցված ծառայություններից, եթե հիմա գտնում է, որ Ընկերությունը էականորեն խախտել է պայմանագրի կետերը: Սա վկայում է այն մասին, որ Ընկերության նկատմամբ եղել է կողմնակալ վերաբերմունք:

Ընկերությունը ամիսներ շարունակ մատուցել է ծառայություններ առանց ակնկալելու միակողմանի շահ: Սա վկայում է մեր պատասխանատվության բարձր աստիճանի մասին:

Ի լրումն վերը նշված դիրքորոշման Ընկերությունը հայտնել է հետևյալը.

ՀՀ Սոցիալական ապահավության ծառայության հետ կնքված ՍԱԾԳՀԾՁԲ-19/5 պայմանագիրը լուծված չէ կողմերի համաձայնությամբ, իսկ միակողմանի լուծելու վերաբերյալ ՀՀ Սոցիալական ապահովության ծառայությունը հրապարակել է ծանուցում, սակայն դատական կարգով պայմանագիրը չի լուծվել:

Հարկ եմ համարում նշել, որ ծանուցման մեջ ՀՀ Սոցիալական ապահավության ծառայությունը խեղաթյուրելով ՍԱԾԳՀԾՁԲ-19/5 պայմանագրի 7.9 կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.03.2017թ. թիվ 526 որոշման N1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ սխալմամբ հանգել է ոչ իրավաչափ հետևության, որ ծանուցումը www.procurement.am կայքով հրապարակելու հաջորդ օրվանից պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված, մինչդեռ ՍԱԾԳՀԾՁԲ-19/5 պայմանագրի 7.9 կետը սահմանում է՝. «Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից», իսկ ՀՀ կառավարության 04.03.2017թ. թիվ 526 որոշման N1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը ընդհանրապես կապ չունի պայմանագրի լուծման հետ:

Ներկա պահին «Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ-ն ընդամենը ծանուցվել է պայմանագրի միակողմանի լուծելու վերաբերյալ և նշված պայմանագիրը կարող է լուծվել միայն դատարանի վճռով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 2-րդ մասի: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ծառայությունների մատուցման ժամկետը լրացել է 15.12.2019թ., գտնում եմ, որ բացակայում են ՀՀ «Գնումներ մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի հատկանիշները՝ «Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

«Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/207 ընթացակարգի շրջանակներում 23.01.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրություններով ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>Սոցիալական ապահովության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Սոցիալական ապահովության ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.12.2019թ. թիվ 02/12-1/29871-2019 գրությամբ հայտնել է, որ Սոցիալական ապահովության ծառայության և «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊ ընկերության միջև 2019 թվականի հունիսի 18-ին կնքվել է «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման» N ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5 գնման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որով Կատարողը ստանձնել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 1.1-ին, 1.2-րդ կետերի համաձայն Կատարողը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում մատուցել նույն հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն):

Սակայն Կատարողի կողմից Պայմանագրի N 3.1 հավելվածով Պատվիրատուին հանձնված Պայմանագրի արդյունքը չի համապատասխանել Պայմանգրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը՝ ընդ որում Պայմանագրի նույն կետի «ա» ենթակետի համաձայն

պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետի և Պայմանագրի 7.9-րդ կետի համաձայն՝ Ծառայությունը ապահովել է միակողմանի լուծված Պայմանագրի ծանուցումը և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ Կատարողի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, համապատասխան բանկ ներկայացնելու և տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու ուղղությամբ:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 45-րդ կետի դրույթը՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Ձեզ է ներկայացվում «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊ ընկերության տվյալները և գործով առկա փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/207 ընթացակարգի շրջանակներում 23.01.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

**4. <u>ՍՑ-ՆԳ-2019/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2019/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Սոցիալական ապահովության ծառայության և «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊ ընկերության միջև 2019 թվականի հունիսի 18-ին կնքվել է «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման» N ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5 գնման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որով Կատարողը ստանձնել է ծրագրային ապահովման

սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. Պայմանագրի 1.1-ին, 1.2-րդ կետերի համաձայն Կատարողը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում մատուցել նույն հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայություններ:

3. Պատվիրատուի կողմից 19.12.2019թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

**5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ /26-1/21369-2019 գրությունը, Սոցիալական ապահովության ծառայության 23.12.2019թ. թիվ 02/12-1/29871-2019 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Սոցիալական ապահովության ծառայության և «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊ ընկերության միջև 2019 թվականի հունիսի 18-ին կնքվել է «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման» N ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5 գնման պայմանագիր (հետայսու՝ Պայմանագիր), որով Կատարողը ստանձնել է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 1.1-ին, 1.2-րդ կետերի համաձայն Կատարողը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ժամկետներում մատուցել նույն հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն):

Պայմանագրի Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն, ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել 15.12.2019թ.-ը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացած Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ Պատվիրատու կողմից Պայմանագրի 3.3 կետի համաձայն տրված բացասական եզրակացությունը, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից տրված բացասական եզրակացության մեջ նշել է հետևյալը. «Կատարողի կողմից պայմանագրի 3.1 Հավելվածով Պատվիրատուին հանձնված պայմանագրի արդյունքը չի համապատասխանում Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին», մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարի պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձեվը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի N 180-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին 20.05.2017թ. թիվ 228-Ն հրամանով հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևի հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ կատարված աշխատանքները, մատուցված ծառայությունները և մատակարարված ապրանքները՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերին, քանակական ցուցանիշներին և գնման ժամանակացույցին համապատասխանելու դեպքում «Նշումներ անհամապատասխանությունների մասին» բաժնում լրացվում են միայն հետևյալ բառերը՝ «անհամապատասխանությունները բացակայում են», ***հակառակ դեպքում՝ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից տրված բացասական եզրակացության մեջ մանրամասն չեն նկարագրվել արձանագրված անհամապատասխանությունները, որպիսի պահանջը հստակ սահմանված է ՀՀ ֆինանսների նախարարի վերը նշված հրամանով՝ հնարավորություն չընձեռելով

Ընկերությանը պայմանագրին համապատասխանող ծառայություն մատուցելու ողջամիտ ժամկետ՝ փաստացի զրկելով «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին Պայմանագրով նախատեսված պարտականությունների հետագա կատարման հնարավորությունից, ուստի նման փաստական հանգամանքներով պայմանավորված գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի կողմից իր և Սոցիալական ապահովության ծառայության միջև 18.06.2019թ. կնքված է N ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/5 ծածկագրով պայմանագրի էական խախտման փաստը, հետևաբար նաև Ընկերության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտման փաստը: Ուստի գտնում եմ, որ «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.12.2019թ. թիվ /26-1/21369-2019 գրությամբ «Ռեսեթ կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**